ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 52-85-11

« 19 » մարտի 2025 թ.

№ ԱՍ/34.2-Մ2-9/1186-2025

«ՊՐՈՖ ՄՈՆՈԼԻԹ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 19-ի «ՊՐՈՖ ՄՈՆՈԼԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու մասին» №80-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված որոշման պահանջները չկատարելու և առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը շարունակելու դեպքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, հանձնաժողովն իրավասու է կիրառել համապատասխան տույժ կամ տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

Առդիր՝ 2 էջ:

19.03.2025

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան ☎ 015 58 08 08 (124)

600.0080.19.03.25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2025 թվականի №80-Ա

«ՊՐՈՖ ՄՈՆՈԼԻԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի փետրվարի 13-ի №04/11.1/1166-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գյուրջյան փողոցի №14/1 հասցեում գտնվող շինհրապարակում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՊՐՈՖ ՄՈՆՈԼԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), հայտնաբերվել են առանց թույլտվության 462.125ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող ռադիոկայաններ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 14-ի №ՍԾ/34.2-Մ2-9/639-2025 գրությունը, որի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացվել,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Ընկերության կողմից առանց թույլտվության 462.125ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 462.125ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
19 մարտի 2025 թ.

22/4

ՀԱՅԱՍՏԱՆ ARMENIA

Տ	Հարկային	Հ
Ա	գանձումներ	Ա
Ֆ	Tax percua	Y
Ի		Բ
Ն		Ա
Ա		Ս
Ն		Տ

ARMENIA YEREVAN 07 MAR 2025 0002

դրոյին ծառայություններով կառավարող
ստորաբաժանում

ՀՀ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԱՍՐՅԱՆ Փ. 22

2-Մ2-9/1186-2025ա/տ

Մնաց 45

L0127113921AM

YEREVAN 25 APR 2025 0012

ՀՈՒՍԱՀ CN15

Մերժված / Refused

Չի պառանքվել/ Unclaimed

Հասցեն սխալ է / Incorrect address

Ախտի ամսաթիվ / Return Date

«ՊՐՈՖ ՄՈՆՈԼԻԹ» ՍՊԸ

Armenia ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, Լուսավորչի պողոտա 24/2 բն. 28

ARMENIA YEREVAN 05 MAY 2025 0002

ARMENIA YEREVAN 22 MAR 2025 0012

Տիման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«ՊՐՈՖ ՍՈՆՈՒԼԻԹ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
Կոմիտասի պողոտա, 24/2, բն. 28,

A.R.

Ծառայողական/
On postal service

Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- [ ] Առաջնային նամակ/ Priority letter
- [ ] Հրատարակչություն/ Printed paper
- [ ] Ծանրոց/ Parcel
- [ ] Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

- [ ] Պատվիրված/Registered
- [ ] Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- [ ] Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO127113921AM

- [ ] Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

- [ ] Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- [ ] Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- [ ] հանձնվել է/ delivered
- [ ] վճարվել է/ paid
- [ ] գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0127113921AM

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.2-Մ2-9/1186-2025պ/մ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am